ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/240

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչներ՝ Վ. Մովսեսյանի և Է. Հովհաննիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցում, էլեկտրական ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15182-2020 գրությամբ «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 02.10.2020թ.-ի թիվ 01/13.1/1396-20 գրության հիման վրա, 06.10.2020թ.-ին «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 06.10.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 07.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/240 համարի ծածկագիրը:

15.10.2020թ.-ին և 06.11.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.11.2020թ.-ին:

2. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը 02.10.2020թ.-ի թիվ 01/13.1/1396-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 2-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով էլեկտրական ապրանքների գնման ընթացակարգի շրջանակում գնային առաջարկ է ներկայացրել Սուրեն Խոջոյան անհատ ձեռնարկատերը:

Հայտնում եմ, որ Մասնակցի կողմից չի ներկայացվել գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարությունը՝ հավելված 1 և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 1.1: Տեղ գտած անճշտությունը շտկելու նպատակով գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրվել է մեկ աշխատանքային օր, որի ընթացքում Սուրեն Խոջոյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.10.2020թ.-ի գրությամբ դիմել է «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15182-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 14.10.2020թ.-ին ներկայացրած առարկությամբ հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի սեպտեմբերի 8-ին մասնակցել եմ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից 2020թ. սեպտեմբերի 2-ին «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով հայտարարված գնառաջարկի մրցույթին: Հավելեմ, որ մասնակցության հաջորդ օրը սեպտեմբերի 9-ին, հետևելով armeps.am կայքի էլեկտրոնային գնումների հարթակի նորություններին, հայտնաբերեցի, որ իմ կողմից, նախորդ օրը ՀԱՊՀ հիմնադրամին ներկայացված գնառաջարկի փաթեթը, սխալ լրացման պատճառով, լիարժեք չի ներկայացվել Պատվիրատուին: Մասնավորապես, չի նեյլկայացվել գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (հավելված N 1), առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (հավելված N 1.1) և էլ. հարթակում տեղադրված է եղել միայն հավելված N 2-ի, 10-րդ չափաբաժինը: Անմիջապես, նույն օրը սեպտեմբերի 9-ին զանգահարել եմ Պատվիրատուին, փորձելով շտկել թերություններս և զրույցի ընթացքում Պատվիրատուի լիազոր ներկայացուցիչը ասաց, որ ոչինչ այլևս փոփոխել հնարակոր չի ու գնառաջարկը համարվում է չներկայացված, ուստի, ելնելով վերոգրյալից համարեցի իմ մասնակցությունը նշված մրցույթին չկայացած, այլևս չհետևելով դրա ընթացքին:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից նախաձեռնված ընթացակարգին, ապա կարող եմ ասել հետևյալը.

Ըստ 28.09.2020թ. «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/25» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության, հրավերի 8.10 կետով մերժվել է իմ կողմից ներկայացված հայտը, որը ենթադրում է, որ հրավերի 8.9 կետով իմ կողմից չի կատարվել շտկումներ, սակայն նույն 8.9 կետով սահմանվում է, որ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը, դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին այդ ժամկետում շտկումներ կատարելու համար: Ինչպես երևում է ներկայացված փաստաթղթերից, «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/25» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությունից, նիստը կայացել է ս.թ. սեպտեմբերի 9-ին, իսկ համակարգում զետեղված նյութերից պարզ է դառնում, որ ծանուցումը ինձ ներկայացվել է սեպտեմբերի 17-ին, այսինքն ծանուցումը ստացել եմ նիստի կայանալուց 8 օրացուցային օր հետո:

Հետևաբար, գտնում եմ, որ հանձնաժողովը չեր կարող.

1. Մերժել իմ հայտը, քանի որ փաստացի չեմ ներկայացրել հայտը,

2. Եթե նույնիսկ ընդունենք որ հայտը ներկայացվել է թերություններով, ապա տվյալ դեպքում Պատվիրատուն խախտել է գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետը:

Խնդրում եմ Ձեզ, իմ կողմից ներկայացված բացատրությունները համարել բավարար ՀՀ ՖՆ 06.10.2020թ. թիվ 26/26-1/15182-2020 գրությամբ՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառելու համար:»:

4. <u>ԱՑ-LO-2020/240 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից էլեկտրական ապրանքների ձեռքբերման նպատակով 02.09.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.09.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.2-րդ համաձայն՝ Մասնակցի հայտի թիվ

1 և թիվ 1.1 հավելվածները համակարգում կցված չեն, իսկ գնային առաջարկը կցված է միայն 10-րդ չափաբաժնի համար:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով գնման ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված թերությունները:

iv. Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am կայքի միջոցով 17.09.2020թ.-ին նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի s.khojoyan@gmail.com էլ. փոստի հասցեին:

v. Հանձնաժողովի 22.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ի կողմից չի շտկվել արձանագրված թերությունները:

vi. Հանձնաժողովի 28.09.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ի հայտը մերժել է՝ հիմք ընդունելով գնման ընթացակարգի հրավերի 8.10-րդ կետը:

vii. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 02.10.2020թ.-ի թիվ 01/13.1/1396-20 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15182-2020 գրությամբ «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից էլեկտրական ապրանքների ձեռքբերման նպատակով 02.09.2020թ.-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.09.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.2-րդ համաձայն՝ «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ի հայտի թիվ 1 և թիվ 1.1 հավելվածները համակարգում կցված չեն, իսկ գնային առաջարկը կցված է միայն 10-րդ չափաբաժնի համար, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, հիմք ընդունելով գնման ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված թերությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am կայքի միջոցով 17.09.2020թ.-ին ծանուցում է ուղարկվել Մասնակցի s.khojoyan@gmail.com էլ. փոստի հասցեին: Հանձնաժողովի 22.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ի կողմից չի շտկվել արձանագրված թերությունները, իսկ 28.09.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ Մասնակցի հայտը մերժել է՝ հիմք ընդունելով գնման ընթացակարգի հրավերի 8.10-րդ կետը:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 02.10.2020թ.-ի թիվ 01/13.1/1396-20 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 22.09.2020թ.-ին՝

Մասնակցի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում արձանագրված թերությունները ճշտկելու հիմքով, սակայն «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 02.10.2020թ.-ի թիվ 01/13.1/1396-20 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց,

դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15182-2020 գրությամբ «Սուրեն Խոջոյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/240 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**